# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան
# 2016 թվականի դեկտեմբերին
**(վերլուծություն)**

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 17657 գործարք, որոնց քանակը 2016 թվականի նոյեմբեր ամսվա համեմատ աճել է 17.6 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 5.0 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2016 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2016 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4383 օտարման գործարքի 74.1 %-ը կազմել է առուվաճառքը, 25.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 37.2 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքն աճել է 7.9 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 14.6 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.7 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 0.4 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները (դրամ)** | | |
|---|---|---|---|
| | **դեկտեմբեր 2015 թ.** | **դեկտեմբեր 2016 թ.** | **նոյեմբեր 2016 թ.** |
| **Կենտրոն** | 428000 | 428250 | 428250 |
| **Արաբկիր** | 356700 | 357450 | 357350 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 282800 | 283350 | 283350 |
| **Նոր Նորք** | 253600 | 254500 | 254400 |
| **Ավան** | 261300 | 262100 | 261900 |
| **Էրեբունի** | 252200 | 252600 | 252500 |
| **Շենգավիթ** | 257350 | 258250 | 258000 |
| **Դավթաշեն** | 276300 | 277300 | 277000 |
| **Աջափնյակ** | 250550 | 251500 | 251500 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 243600 | 244400 | 244300 |
| **Նուբարաշեն** | 157000 | 157700 | 157600 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել է 0.04%-ով:

2016 թվականի դեկտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 351 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 8.0 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 8.6 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | դեկտեմբեր 2015 թ. | դեկտեմբեր 2016 թ. | նոյեմբեր 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 116000 | 116200 | 116200 |
| | Ապարան | 58100 | 58900 | 58900 |
| | Թալին | 66400 | 66900 | 66900 |
| Արարատ | Արտաշատ | 98200 | 99250 | 99200 |
| | Մասիս | 115800 | 115800 | 115800 |
| | Վեդի | 101550 | 101750 | 101750 |
| | Արարատ | 77100 | 77850 | 77750 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154100 | 154200 | 154200 |
| | Արմավիր | 121200 | 121250 | 121250 |
| | Մեծամոր | 87550 | 87600 | 87600 |
| Գեղարքունիք | Սևան | 99400 | 99400 | 99400 |
| | Գավառ | 60300 | 60800 | 60800 |
| | Մարտունի | 107700 | 107700 | 107700 |
| | Վարդենիս | 45050 | 45400 | 45400 |
| | Ճամբարակ | 28750 | 28800 | 28800 |
| Լոռի | Վանաձոր | 88500 | 88600 | 88600 |
| | Ստեփանավան | 74650 | 74900 | 74900 |
| | Սպիտակ | 99850 | 99950 | 99950 |
| | Ալավերդի | 55400 | 55950 | 55950 |
| | Տաշիր | 47350 | 47400 | 47400 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20500 | 20500 | 20500 |
| Կոտայք | Աբովյան | 155100 | 155150 | 155150 |
| | Նոր Հաճն | 128550 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108200 | 108250 | 108250 |
| | Եղվարդ | 109550 | 110050 | 110050 |
| | Հրազդան | 63800 | 63900 | 63900 |
| | Ծաղկաձոր | 292400 | 292400 | 292400 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109250 | 109450 | 109450 |
| | Արթիկ | 66900 | 67400 | 67400 |
| | Մարալիկ | 40900 | 41150 | 41150 |
| Սյունիք | Գորիս | 123400 | 124200 | 124100 |
| | Կապան | 94500 | 95800 | 95700 |
| | Սիսիան | 92000 | 92400 | 92400 |
| | Մեղրի | 82650 | 83650 | 83550 |
| | Ագարակ | 47500 | 47900 | 47850 |
| | Քաջարան | 94650 | 95000 | 95000 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 95000 | 95100 | 95100 |
| | Եղեգնաձոր | 125850 | 126550 | 126550 |
| | Ջերմուկ | 112950 | 113300 | 113300 |
| Տավուշ | Դիլիջան | 115200 | 115700 | 115700 |
| | Իջևան | 118450 | 118600 | 118600 |
| | Բերդ | 60300 | 60600 | 60550 |
| | Նոյեմբերյան | 50200 | 50600 | 50500 |
| | Այրում | 31850 | 31900 | 31900 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 416 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 118 գործարք, մարզերում՝ 298 գործարք: 2016 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 1.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 4.4 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 3.6 %-ով: 2016 թվականի դեկտեմբերին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 21.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 41.9 %-ով, իսկ մարզերում՝ 8.3 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ$^2$ և տնամերձի 400.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները (դրամ)** | | |
|---|---|---|---|
| | **դեկտեմբեր 2015 թ.** | **դեկտեմբեր 2016 թ.** | **նոյեմբեր 2016 թ.** |
| **Կենտրոն** | 476100 | 476350 | 476350 |
| **Արաբկիր** | 383000 | 383200 | 383200 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 295000 | 295300 | 295300 |
| **Նորք-Մարաշ** | 319200 | 319550 | 319550 |
| **Ավան** | 270500 | 270750 | 270750 |
| **Էրեբունի** | 239750 | 239900 | 239900 |
| **Շենգավիթ** | 255000 | 255150 | 255150 |
| **Դավթաշեն** | 276000 | 276200 | 276200 |
| **Աջափնյակ** | 250050 | 250300 | 250300 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 238000 | 238250 | 238250 |
| **Նուբարաշեն** | 150800 | 150800 | 150800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ$^2$ և տնամերձի 1000.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | դեկտեմբեր 2015 թ. | դեկտեմբեր 2016 թ. | նոյեմբեր 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136250 | 136250 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100100 | 100100 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153150 | 153150 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94950 | 94950 | 94950 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96200 | 96200 |
| | Վարդենիս | 41100 | 41150 | 41150 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100800 | 100900 | 100900 |
| | Ստեփանավան | 91100 | 91200 | 91200 |
| | Սպիտակ | 114000 | 114050 | 114050 |
| | Ալավերդի | 50200 | 50300 | 50300 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157300 | 157350 | 157350 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 119250 | 119350 | 119350 |
| | Արթիկ | 63350 | 63450 | 63450 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130050 | 130050 |
| | Կապան | 100650 | 100850 | 100750 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84600 | 84750 | 84650 |
| | Ագարակ | 46900 | 47000 | 46950 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90150 | 90150 | 90150 |
| | Եղեգնաձոր | 116750 | 116750 | 116750 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 115400 | 115850 | 115750 |
| | Իջևան | 123200 | 123250 | 123250 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները

(ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում օտարվել է 1538 միավոր (579.05 հա) հող, որից Երևանում՝ 114 միավոր (11.06 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 953 միավոր (485.30 հա), որից Երևանում՝ 6 միավոր (1.73 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 399 միավոր (34.96 հա), որից Երևանում՝ 47 միավոր (2.16 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 138 միավոր (15.75 հա), որից Երևանում՝ 58 միավոր (5.90 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 15 միավոր (7.46 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.27 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 12 միավոր (2.63 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 18 միավոր (0.55 հա),
- ջրային հող՝ 3 միավոր (32.40 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1291 միավորի (482.22 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 95 միավոր (7.70 հա), նվիրատվության գործարք՝ 239 միավորի (94.25 հա), որից Երևանում՝ 13 միավոր (1.03 հա) և փոխանակության գործարք՝ 8 միավորի (2.58 հա), որից Երևանում՝ 6 միավոր (2.33 հա):

Հանրապետությունում 2016 թվականի դեկտեմբերին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 16.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 6.8 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 26.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 31.6 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 93.26 հա, որից 53.98 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 14.6 %-ը կամ 188 միավորը (40.02 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 31 միավոր (0.79 հա), իսկ 84.0 %-ը կամ 1085 միավորը (408.42 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 63 միավոր (6.90 հա): 2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 18 գործարք (33.78 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2016 թվականի դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 2 | 0.04 | 13 | 0.62 | 16 | 0.13 | 6 | 1.73 | 0 | 0.00 | 29 | 1.28 | 28 | 3.89 |
| Արագածոտն | 5 | 5.85 | 1 | 0.48 | 1 | 0.04 | 1 | 0.02 | 62 | 52.51 | 1 | 0.01 | 20 | 2.69 | 4 | 0.39 |
| Արարատ | 5 | 0.92 | 1 | 0.03 | 0 | 0.00 | 4 | 0.05 | 111 | 38.19 | 0 | 0.00 | 53 | 4.55 | 7 | 0.10 |
| Արմավիր | 8 | 3.39 | 1 | 0.005 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 64 | 50.58 | 1 | 0.07 | 63 | 6.79 | 5 | 0.02 |
| Գեղարքունիք | 2 | 0.04 | 1 | 1.13 | 2 | 0.25 | 7 | 0.19 | 182 | 66.88 | 1 | 0.10 | 30 | 3.33 | 6 | 0.19 |
| Լոռի | 1 | 0.62 | 2 | 0.50 | 3 | 0.05 | 9 | 0.05 | 76 | 37.39 | 0 | 0.00 | 11 | 0.76 | 4 | 0.36 |
| Կոտայք | 7 | 2.84 | 1 | 4.80 | 16 | 0.58 | 2 | 0.05 | 129 | 65.61 | 0 | 0.00 | 41 | 3.96 | 6 | 1.41 |
| Շիրակ | 13 | 5.63 | 0 | 0.00 | 12 | 0.18 | 0 | 0.00 | 56 | 31.27 | 1 | 0.04 | 4 | 0.46 | 1 | 0.004 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.13 | 0 | 0.00 | 30 | 14.81 | 0 | 0.00 | 8 | 0.80 | 0 | 0.00 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 12 | 10.85 | 0 | 0.00 | 2 | 0.20 | 0 | 0.00 |
| Տավուշ | 5 | 8.97 | 0 | 0.00 | 9 | 0.42 | 8 | 0.61 | 20 | 6.19 | 0 | 0.00 | 7 | 0.71 | 1 | 0.002 |
| Ընդամենը | 46 | 28.26 | 9 | 6.99 | 58 | 2.27 | 49 | 1.15 | 748 | 376.01 | 4 | 0.22 | 268 | 25.53 | 62 | 6.37 |

Ստորև ներկայացված է 2016 թվականի դեկտեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 13 | 0.19 | 2 | 0.04 | 9 | 0.11 | 2 | 0.04 | 18 | 0.59 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.50 | 14 | 0.09 |
| Արագածոտն | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.75 | 1 | 0.21 | 1 | 0.48 | 1 | 0.04 | 1 | 0.02 |
| Արարատ | 2 | 0.03 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 8 | 0.97 | 5 | 0.92 | 1 | 0.03 | 0 | 0.00 | 2 | 0.02 |
| Արմավիր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 6 | 0.515 | 4 | 0.50 | 1 | 0.005 | 0 | 0.00 | 1 | 0.01 |
| Գեղարքունիք | 4 | 0.03 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.03 | 7 | 1.55 | 1 | 0.01 | 1 | 1.13 | 2 | 0.25 | 3 | 0.16 |
| Լոռի | 5 | 0.045 | 1 | 0.005 | 2 | 0.02 | 2 | 0.02 | 10 | 1.19 | 1 | 0.62 | 1 | 0.50 | 1 | 0.03 | 7 | 0.04 |
| Կոտայք | 8 | 0.13 | 0 | 0.00 | 8 | 0.13 | 0 | 0.00 | 18 | 8.14 | 7 | 2.84 | 1 | 4.80 | 8 | 0.45 | 2 | 0.05 |
| Շիրակ | 3 | 0.01 | 0 | 0.00 | 3 | 0.01 | 0 | 0.00 | 9 | 0.18 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 9 | 0.18 | 0 | 0.00 |
| Սյունիք | 2 | 0.13 | 0 | 0.00 | 2 | 0.13 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 |
| Տավուշ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 22 | 10.00 | 5 | 8.97 | 0 | 0.00 | 9 | 0.42 | 8 | 0.61 |
| **Ընդամենը** | **37** | **0.57** | **3** | **0.05** | **24** | **0.40** | **10** | **0.12** | **103** | **23.93** | **24** | **14.07** | **6** | **6.95** | **34** | **1.87** | **39** | **1.04** |

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 22 գործարք (14.19 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի դեկտեմբերին, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 62.4 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 3.0 անգամ, իսկ մարզերում նվազել է 67.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 81.5 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 72.4 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 36.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 0.21 | 374.4 | 374.4 | 374.4 | 24 | 21.01 | 365.0 | 12000.0 | 3370.0 |
| Ապարան | | | | | | 8 | 8.06 | 86.5 | 2727.3 | 649.4 |
| Թալին | | | | | | 13 | 2.61 | 93.6 | 5494.5 | 688.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 12 | 20.23 | 79.5 | 1000.0 | 418.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 4 | 0.44 | 853.8 | 856.1 | 855.4 | 35 | 11.30 | 335.1 | 10833.3 | 2708.0 |
| Մասիս | | | | | | 24 | 8.32 | 200.0 | 11904.8 | 3392.0 |
| Վեդի | 1 | 0.48 | 314.0 | 314.0 | 314.0 | 51 | 17.76 | 207.0 | 10795.1 | 2050.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 3 | 0.40 | 63.0 | 168.5 | 114.3 | 33 | 18.33 | 294.3 | 9090.0 | 1427.0 |
| Բաղրամյան | | | | | | 13 | 23.64 | 90.6 | 2561.1 | 880.0 |
| Վաղարշապատ | 1 | 0.11 | 71.7 | 71.7 | 71.7 | 18 | 8.61 | 444.4 | 11764.7 | 1990.3 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 1 | 0.01 | 540.0 | 540.0 | 540.0 | 147 | 41.15 | 199.8 | 1875.0 | 520.0 |
| Ճամբարակ | | | | | | 1 | 0.27 | 60.5 | 953.3 | 352.0 |
| Մարտունի | | | | | | 7 | 4.20 | 51.1 | 2850.0 | 750.0 |
| Սևան | | | | | | 22 | 12.45 | 52.2 | 2134.8 | 360.0 |
| Վարդենիս | | | | | | 5 | 8.81 | 41.2 | 2575.1 | 367.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 1.09 | 170.4 | 6424.2 | 558.0 |
| Գուգարք | 1 | 0.62 | 206.9 | 206.9 | 206.9 | 11 | 3.60 | 234.6 | 6065.9 | 820.0 |
| Սպիտակ | | | | | | | | 250.0 | 5555.5 | 675.0 |
| Ստեփանավան | | | | | | 3 | 1.63 | 90.6 | 1686.6 | 405.0 |
| Տաշիր | | | | | | 57 | 28.99 | 45.3 | 1384.4 | 187.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 1 | 0.15 | 94.2 | 94.2 | 94.2 | 38 | 13.72 | 279.3 | 11942.7 | 4044.3 |
| Եղվարդ | 5 | 0.54 | 1479.4 | 1755.0 | 1637.1 | 78 | 44.75 | 174.4 | 11971.8 | 2556.5 |
| Հրազդան | 1 | 2.16 | 282.3 | 282.3 | 282.3 | 13 | 7.14 | 130.5 | 10256.4 | 1033.5 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 22 | 6.61 | 252.0 | 1693.1 | 700.0 |
| Ամասիա | | | | | | | | 40.9 | 261.0 | 142.0 |
| Անի | | | | | | 6 | 6.65 | 110.6 | 546.9 | 470.0 |
| Աշոցք | | | | | | 3 | 8.12 | 58.5 | 215.8 | 142.0 |
| Արթիկ | | | | | | 22 | 9.77 | 79.4 | 1428.6 | 547.5 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 4 | 3.38 | 92.6 | 1023.2 | 728.0 |
| Կապան | | | | | | 13 | 8.61 | 120.0 | 841.6 | 462.5 |
| Մեղրի | | | | | | 3 | 0.61 | 193.0 | 3000.0 | 823.0 |
| Սիսիան | | | | | | 9 | 2.09 | 46.3 | 1977.4 | 556.5 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 9 | 7.36 | 125.0 | 10000.0 | 1775.0 |
| Վայք | | | | | | 3 | 3.49 | 58.8 | 1430.7 | 630.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 15 | 4.53 | 213.3 | 3783.8 | 711.5 |
| Իջևան | 5 | 8.97 | 43.7 | 154.8 | 132.4 | 2 | 0.22 | 267.5 | 9454.5 | 1580.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 3 | 1.45 | 46.7 | 7368.4 | 980.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի դեկտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | պայմանագրային գները 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | շուկայական գները 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 360.0 | 2373.1 | 2373.1 | 2373.1 | 17 | 21107.0 | 130.7 | 22200.0 | 2588.0 |
| Ապարան | | | | | | 1 | 1140.0 | 124.1 | 609.6 | 389.5 |
| Թալին | | | | | | 2 | 4640.0 | 63.2 | 1454.8 | 152.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 95.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 11 | 10679.2 | 173.9 | 7140.3 | 903.5 |
| Մասիս | | | | | | 25 | 18333.4 | 187.5 | 25000.0 | 1206.5 |
| Վեդի | | | | | | 17 | 16518.0 | 126.1 | 5000.0 | 664.3 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 30 | 35311.6 | 131.6 | 9090.9 | 1216.0 |
| Բաղրամյան | | | | | | 2 | 2400.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 31 | 30198.0 | 197.4 | 26528.4 | 1530.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 5 | 3308.6 | 186.6 | 1084.3 | 683.8 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 147.0 |
| Մարտունի | 1 | 1947.0 | 321.0 | 321.0 | 321.0 | 21 | 21735.0 | 119.3 | 5000.0 | 279.0 |
| Սևան | 1 | 600.0 | 1273.0 | 1273.0 | 1273.0 | | | 240.0 | 3110.4 | 347.0 |
| Վարդենիս | | | | | | 4 | 8266.0 | 72.5 | 987.2 | 150.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 900.0 | 114.3 | 1388.9 | 217.0 |
| Գուգարք | 1 | 308.9 | 160.7 | 160.7 | 160.7 | 9 | 6636.2 | 77.9 | 14083.3 | 1259.0 |
| Սպիտակ | | | | | | | | 104.9 | 1348.3 | 198.3 |
| Ստեփանավան | | | | | | 1 | 94.0 | 88.2 | 1666.7 | 176.0 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 2 | 575.4 | 2375.0 | 3382.5 | 2878.8 | 25 | 21191.3 | 264.5 | 35353.5 | 1953.2 |
| Եղվարդ | 2 | 1923.5 | 1617.1 | 2375.1 | 1996.1 | 13 | 15154.0 | 173.6 | 27000.0 | 2855.0 |
| Հրազդան | 4 | 2010.0 | 1428.9 | 4976.4 | 3034.8 | 3 | 3260.0 | 117.7 | 34848.5 | 1320.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 9 | 1770.7 | 1050.0 | 5245.0 | 3490.7 | 3 | 3433.8 | 113.6 | 18750.0 | 333.5 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | | | | | | | | 67.9 | 180.6 | 217.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | | | | | | 1 | 1130.0 | 111.8 | 5000.0 | 217.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | | | 112.2 | 1700.0 | 366.3 |
| Կապան | | | | | | 2 | 2940.0 | 67.9 | 2638.9 | 370.0 |
| Մեղրի | | | | | | 2 | 1100.0 | 68.5 | 632.9 | 270.0 |
| Սիսիան | | | | | | 4 | 4007.0 | 123.5 | 875.0 | 263.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 2 | 2007.0 | 96.7 | 7659.6 | 508.0 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 250.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 2 | 3018.0 | 75.8 | 810.0 | 131.0 |
| Իջևան | 9 | 4177.4 | 159.5 | 3000.0 | 1665.6 | 4 | 2730.9 | 74.1 | 14423.1 | 500.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 1 | 1372.6 | 125.0 | 1948.1 | 259.0 |

2016 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 658 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.7 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 92.6 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 7.7 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 17.0 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանի, 15 անհատական բնակելի տան, 291 հասարակական և 77 արտադրական նշանակության օբյեկտի, 221 հողի և 7 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի նոյեմբերի համեմատ ավելացել է 8-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 20.0 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 3070.96 հա հողից 1.60 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 3069.37 հա հողերից 2598.75 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 443.35 հա արդյունաբերական օբյեկտների օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 2877.37 հա, որից 2442.22 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2948 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 16.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 68.4 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 23.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (48.9 %), անհատական բնակելի տների (18.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.1 %) և հողերի (11.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1660 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 78.7 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 41.2 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 9990.37 հա հող, որից 4.34 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 154.35 հա կամ 1.5 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով՝ 9390.48 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող գրավադրվել է Սյունիքի մարզում:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 178 գործարք: 2016 թվականի դեկտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 23.6 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 9.9%-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 119 գործարք, որը 2016 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 22.7 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, 12.3 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 25.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 5.4 %-ով:

2016 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 2669 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 2.3 %-ով, իսկ 2015 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 19.1 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 15.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (35.4%):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**